ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ 2018-2019 ուսստարի

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

*Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր* (ընդամենը՝ 50 միավոր):

*Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:*

*Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Լրացնել բնագրում բաց թողած տառերը.*

Տաք միջ__րե էր. շուրջը տարածվել էին հաճելի բույրեր, թրթ__ուն գույներ, որոնց մեջ իշխում էր դեղնակարմիրը: Սաղարթախիտ անտառի և ոսկեղեն արտերի վրա իջել էր անդո___ավետ թախծություն: Սիմինդրի զմրու__տյա տեր__ները քսվում էին միմ__անց և քա__ցրահնչյուն խշխշոց ար__ակում: Արեգակի տակ թախծոտ ժպտում էր արևածաղիկը և օր__րում դեղին գլխիկը: Քամին մեղմիկ տարուբերում էր որ__ատունկերի հյութեղ ողկույզները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. *Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.*
ուս (ուսի), հյուսիս (արևմտյան), դեմ (դիմաց), ռուս (հայկական), ի (գիտություն), գլուխ (գործոց), ճյուղից (ճյուղ), տարեց (տարի), ուշ (ուշ), աշխարհե (աշխարհ).

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. *Տրված արմատները միացնելով՝ կազմել 5 բառ.*

*երկիր* *մարտ*
*ժպիտ* *գունդ*
*ըմբիշ* *երես*
*ծառ* *նվեր*
*ազգ* *տունկ*

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Առաջին շարքի նախածանցներով և երկրորդ շարքի համապատասխան բառերով կազմել ածանցավոր բառեր.

դժ ճաշ
դեր խումբ
ենթ անուն
ստոր դաս
ընդ առաջ
նախ բախտ

________________________________________________________________________________
______________________________________________________________________________

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Ընտրել և յուրաքանչյուր դարձվածքի դիմաց գրել համապատասխան իմաստը.

ականջը զցել կողմնորոշվել
աչքը ջուր կտրել հաղորդել, հայտնել
գլուխ հանել ապստամբել, ըմբոստանալ
ոտքի ելնել տանջել, չարչարել
հոգին հանել մեկին երկար սպասել

________________________________________________________________________________
________________________________________________________________________________
________________________________________________________________________________
________________________________________________________________________________

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Առաջին շարքի նախածանցներով և երկրորդ շարքի համապատասխան վերջածանցներով կազմել ածանցավոր բառեր.

որդի ենի
ծով ական
հուր իչ
դեղձ ային
գիր եղեն

________________________________________________________________________________
______________________________________________________________________________

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Ընդգծել այն բառը կամ բառակապակցությունը, որն արտահայտում է փակագծերում տրված բառի փոխաբերական իմաստը.

ա/ (փիղ) – անտաշ, կատաղի, անկուշտ, հսկա

բ/ (օձ) – ստորաքարշ, վայրենի, նենգ, հնարամիտ

գ/ (բազե) – պորտաբույծ, երես առած, խիզախ օդաչու, անբան

դ/ (թութակ) – անխելք, ուրիշի խոսափող, պճնամոլ, շատախոս

ե/ (աղվես) – արագաշարժ, խորամանկ, անհամակրելի, լեզվանի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Կապակցությունների իմաստ արտահայտել մեկ բառով.

ա/ Երեք նիշ ունեցող ________________________________________

բ/ Երգիչների խումբ ____________________________________________

գ/ Գլուխների քանակ _______________________________________

դ/ Ամեն տեղով գնացող _____________________________________

ե/ Միջին դարերին պատկանող ______________________________

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Տրված իմաստների դիմաց գրել համանուն բառեր.

ա/ Ոչ հաստ ______________________

Որսի շուն _____________________

բ/ Ձող կամ փայտ, որի վրա թառում են ընտանի թռչունները _____________________________

Արևելյան երաժշտական գործիք _____________________________________________________

գ/ կռիվ ______________________________

ամիս______________________________

դ/ Ձեռք, դաստակ __________________________________

ճակնդեղ _______________________________________

ե/ Տղամարդ ______________________________________

Քարանձավ ___________________________________

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Տեղադրել *միօրինակ, բնօրինակ, տարօրինակ, յուրօրինակ, անօրինակ* բառերը.

1. Ֆիդայիների _________________________սխրանքները հայրենասիրության հրաշալի դասեր են:
2. Բոլոր խելացի մարդիկ մի քիչ _______________________________ են:
3. Թանգարանում ցուցադրված են ______________________________ աշխատանքներ:
4. Նրա _____________________ խոսքը ձանձրացրեց ունկնդիրներին:
5. Նկարչի կտավների _______________________________ զավակները հանձնեցին թանգարանին: